ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ

Հունվարի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի այս տարվա անդրանիկ ընդլայնված նիստը: Տերունական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը ողջունեց, Ամանորյա ու Սուրբ Ծննդյան իր մաղթանքներն ուղղեց ներկաներին:

Նորին Սրբությունը հաջողված նկատեց 2001 հոբելյանական տարում իրականացված ծրագրերը: Ինչպես նշեց Հայոց Հայրապետը, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հանդիսություններն իրապես ծառայեցին իրենց նպատակին՝ դառնալով պարարտ հող քրիստոնեական ոգու զորացման և տարածման համար:

Տարեսկզբի ընդլայնված այս նիստում նախանշվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջիկա տարվա գործունեությունը: Նիստերի ընթացքում ԳՀԽ անդամները քննարկեցին Հայ Եկեղեցու կանոնադրությանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նվիրապետական Աթոռների միջև հարաբերություններին, քրիստոնեական դաստիարակության, հոգևոր-կրթական խնդիրներին առնչվող հարցեր:

Վեհափառ Հայրապետին նախապես տեղեկացրած լինելով, ժողովի աշխատանքներին չեն կարողացել իրենց մասնակցությունը բերել ԳՀԽ-ի զույգ ատենապետերը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, ուստի նիստերին ատենապետեց ժողովին ներկա ավագագույն անդամ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Ժողովին չեն կարողացել մասնակցել նաև Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ. արքեպս. Գրիգորյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, ԳՀԽ աշխարհական անդամներից՝ Էդուարդ Ժաքյանը:

Հունվարի 10-ի նիստում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախորդ ինն ամիսների գործունեության ընդարձակ հաշվետու զեկույցը ներկայացրեց Վեհափառ Հայրապետը (Տե՛ս էջ 26):

Հունվարի 11-ին քննարկվեց մամուլում հրապարակված տեղեկատվությունը՝ Կանադայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից թեմ հռչակելու մասին: Որոշվեց նամակ հղել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինին՝ հայտնելով ԳՀԽ-ի մտահոգությունը:

Քննարկվեց նաև առաջիկայում Եպիսկոպոսաց ժողով գումարելու հարցը: ԳՀԽ-ն որոշեց Եպիսկոպոսաց ժողովը գումարել 2002 թ. հոկտեմբերի վերջին: Ժողովի կազմակերպման համար նշանակվեց հանձնախումբ, որը կնախապատրաստի ժողովի հրավիրման աշխատանքները:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Կանոնադրության» հարցը մշտապես Գերագույն Հոգևոր Խորհրդի ուշադրության կենտրոնում է: Այս առնչությամբ որոշվեց գործող հանձնախումբը համալրել նոր անդամներով և ստացված նոր առաջարկներով լրամշակել առկա նախագիծը:

ԳՀԽ-ն Եկեղեցու առաքելության առանցքային ուղենիշների շարքում առանձնացրեց կրթական, քարոզչական և հրատարակչական գործունեության այն ոլորտներն ու օղակները, որոնց շնորհիվ հնարավոր է արդյունավետ կերպով իրականացնել հայ մարդու քրիստոնեական դաստիարակությունը:

Եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպություն հիմնելու խնդիրը, որ նույնպես ԳՀԽ նիստի օրակարգում էր, ստացավ իր սկզբունքային լուծումը: Որոշվեց այս կառույցը ձևավորել 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում ստեղծված Երիտասարդական ուխտագնացության գրասենյակի հիմքի վրա:

Քննության առնվեցին նաև Եկեղեցու հոգևոր-կրթական ոլորտին առնչվող օրախնդիր հարցեր, որոնց շարքում՝ քահանայից պատրաստության լսարանի ստեղծման խնդիրը: Վերջինիս առիթով Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանին հանձնարարվեց մինչև փետրվարի 1-ը ԳՀԽ-ին ներկայացնել քահանաների պատրաստման դասընթացների ուսումնական ծրագիր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժողովականներին ներկայացրեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 9-ամսյա (ապրիլ-դեկտեմբեր 2001 թ.) գործունեության հաշվետու զեկույցը:

Եկեղեցական կյանքին առնչվող վարչա-կազմակերպական բնույթի հարցերի շարքում էր նաև Վիրահայոց թեմում նոր առաջնորդի նշանակման խնդիրը:

Նույն օրը ԳՀԽ-ն ավարտեց իր եռօրյա աշխատանքը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ